ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(Ընդունված է 2001 թվականի սեպտեմբերի 25-ին)

Հոդված 12. Ընկերության բաժնետերերի հիմնադիր ժողովը

~~5. Հայաստանի Հանրապետությանը պատկանող բաժնետոմսերով ընկերությունների հիմնադրման մասին Կառավարության որոշումը պետք է պարունակի դրույթներ Ընկերության հիմնադրման, ինչպես նաև հիմնադրի անունից հանդես եկող պետական կառավարման համակարգի մարմինների կամ մարզպետների և նրանցից յուրաքանչյուրի կառավարմանը հանձնված բաժնետոմսերի փաթեթի մասին: Սույն հոդվածի 3-րդ կետով սահմանված մյուս լիազորությունները Կառավարությունը կարող է վերապահել համապատասխան պետական կառավարման համակարգի մարմնին (մարմիններին) կամ մարզպետներին, ինչպես նաև, որպես պատվիրակված լիազորություն, համայնքի ղեկավարին (այսուհետ՝ լիազորված մարմին):~~

5. Հայաստանի Հանրապետությանը պատկանող բաժնետոմսերով ընկերությունների հիմնադրման մասին Կառավարության որոշումը պետք է պարունակի դրույթներ Ընկերության հիմնադրման, Կառավարության հաստատած կարգի համաձայն Ընկերությանը վարձակալությամբ տրամադրվող պետական սեփականություն հանդիսացող գույքի (առկայության դեպքում), ինչպես նաև հիմնադրի անունից հանդես եկող պետական կառավարման համակարգի մարմինների կամ մարզպետների և նրանցից յուրաքանչյուրի կառավարմանը հանձնված բաժնետոմսերի փաթեթի մասին: Սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված մյուս լիազորությունները Կառավարությունը կարող է վերապահել համապատասխան պետական կառավարման համակարգի մարմնին կամ մարզպետին, ինչպես նաև, որպես պատվիրակված լիազորություն, համայնքի ղեկավարին (այսուհետ՝ լիազորված մարմին): Ընդ որում 100 տոկոս պետական սեփականության բաժնետոմսերով ընկերություններին պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքը տրամադրվում է միայն վարձակալության իրավունքով: